

---

**ՆՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵՎՎՈՐՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԲԵՐՁՈՐՈՒՄ  
(սոցիոլոգիական վերլուծություն)**

**ՀԱՅԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Բերձորում համայնքային ինքնության հիմնահարցերի քննարկումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցից ամենահատկանշականը թերևս այն է, որ խորհրդային տարիներին ադրբեջանական քաղաքականության հետևանքով ամբողջությամբ հայաթափ արված համայնքի ներկայիս բոլոր բնակիչները վերաբնակներ են, որոնք շրջանի ազատագրումից հետո եկել և հաստատվել են ՀՀ, ԼՂՀ տարբեր շրջաններից, Ադրբեջանից (փախստականներ) և մինչև անգամ արտերկրից: Բնակչության այսպիսի տարաբնույթ և տարասեռ կազմը բավականին հարուստ սոցիոլոգիական նյութ է պարունակում այն իմաստով, որ ամենատարբեր համայնքային ինքնությունների՝ միևնույն վայրում համախմբմամբ ձևավորվել է նոր համայնք, հետևաբար նաև՝ որակապես նոր, նախկինում գոյություն չունեցող ինքնություն: Արդի հայ գիտությունը հնարավորություն ունի անդրադառնալու նոր համայնքային ինքնության ձևավորման գործընթացներին, հայտնաբերելու դրանցում առկա փաստերը և օրինաչափությունները, առանձնացնելու ինքնության ձևավորման հիմնական սոցիալական գործոնները, ինչպես նաև արտաքին սուբյեկտներն ու երևույթները, որոնց հետ փոխազդեցությունների և փոխառնչությունների համատեքստում է տվյալ ինքնության ձևավորումը:

Մյուս՝ ոչ պակաս կարևոր հանգամանքն այն է, որ Բերձորը և առհասարակ Քաջաթաղի շրջանը ռազմավարական նշանակության տարածքներ են Հայաստանի և Արցախի համար՝ որպես այս երկու հանրապետությունների միջև ցամաքային կապն ապահովող հիմնական օղակ: Սրանով էլ պայմանավորված է այս տարածաշրջանում գիտական ուսումնասիրությունների ռազմավարական և գործնական-կիրառական կարևորությունը: 2004 թվականից սկսած՝ համայնքի և շրջանի բնակչության թիվը շարունակական անկում է ապրում, ինչը վկայում է, որ համայնքի համար հրատապ է նաև ժողովրդագրական հիմնախնդիրը, որն ուղիղ կապի մեջ է համայնքային ինքնության փոխակերպման դինամիկ գործընթացների հետ: Այդ հիմնախնդիրը մի կողմից պայմանավորված է ինքնության ձևավորման գործընթացներով, մյուս կողմից՝ իր հերթին պայմանավորում է դրանք:

Ուսումնասիրություններում «համայնք» հասկացությունը բնութագրվում է երկու հիմնական մոտեցմամբ, որոնցից առաջինի դեպքում այն հանդես է գալիս որպես սոցիալ-տարածքային միավոր, իսկ երկրորդի

դեպքում դիտվում է որպես արտատարածքային միավոր<sup>1</sup>: Բերձոր համայնքն այս իմաստով հանդես է գալիս որպես սոցիալ-տարածքային, այսինքն՝ աշխարհագրորեն պայմանավորված միավոր: Այդ իսկ պատճառով այսուհետ այս համայնքը պետք է հասկանալ «սոցիալ-տարածքային հանրություն» նշանակությամբ, քանի որ որպես առաջնային համայնքաստեղծ գործոն այս դեպքում հանդես է գալիս տարածքը. բերձորցու ինքնությունը չի կարող ձևավորվել Բերձորից դուրս: Այստեղից էլ բխում է, որ համայնքային ինքնությունը տվյալ դեպքում տարածքային ինքնության որակ է ստանում, ինչը Ն. Շնատկոն և Յու. Կաչանովը սահմանում են որպես տարածքային հանրությունների համակարգի (սուբյեկտիվ սոցիալ-աշխարհագրական իրականության) վերապրվող և/կամ գիտակցվող իմաստներ, որոնք ձևավորում են անհատի տարածքային պատկանելության «պրակտիկ զգացում» և/կամ գիտակցում: Ըստ այս հեղինակների՝ տարածքային հանրության նույնականացման համար անհրաժեշտ է «սահմանել» այդ հանրություն (թեկուզ և աֆեկտիվ մակարդակում)՝ միևնույն ժամանակ առանձնացնելով մյուսներից: Տարածքային ինքնությունը բնութագրվում է որպես «ես տարածքային հանրության անդամ եմ» սոցիալական նույնականացման իդեալական ներկայացում: Այն կապված է նույնականացվող տարածքի յուրատեսակ ըմբռնման հետ, որն իրականացվում է անհատի՝ տվյալ տարածքային հանրությունը բնութագրող սոցիալ-մշակութային հատկանիշների՝ իր սեփական վերապրման հաշվին<sup>2</sup>:

Այսպիսի մոտեցումից ակնհայտ է դառնում, որ տարածքային ինքնությունը, եթե այն կանխորոշված չէ ի ծնե կամ ժառանգաբար չի փոխանցված, կարող է ձևավորվել միայն տվյալ հանրությանն անդամակցության շնորհիվ:

Տվյալ դեպքում, ըստ համայնքի տարբեր սահմանումների<sup>3</sup>, անհատի՝ համայնքին անդամակցությունն արտահայտվում է հետևյալ կերպ. անհատն անդամակցում է տվյալ համայնքին այն դեպքում, երբ գտնվում է նրա սահմանի ներսում (ոչ բոլոր դեպքերում ֆիզիկապես), իրականացնում է որոշակի գործունեություն սեփական կարիքները բավարարելու

<sup>1</sup> «Համայնք» հասկացությունը մանրամասն քննվել է Վ. Սահակյանի աշխատության մեջ: Սասնագիտական գրականության մեջ առավել տարածում ունեցող սահմանումներից հեղինակն առանձնացնում է համայնքի բնութագրության երկու հիմնական մոտեցում՝ աշխարհագրական և սոցիալ-հոգեբանական միասնություն՝ դրանք անվանելով խմբային և զանգվածային հանրություններ (տե՛ս Վ. Սահակյան, Համայնքի և համայնականության դրսևորումները և զարգացման միտումները Հայաստանում (սոցիոլոգիական վերլուծություն), թեկնածուական ատենախոսություն, Եր., 2002): Այս առումով հատկանշական է նաև Պ. Ուիլմոթի մոտեցումը, որում համայնքը բնութագրվում է որպես շահերի համայնք և տարածքային/տեղային համայնք, որոնք միմյանց չեն փոխբացառում և կարող են ներկայացված լինել մեկը մյուսում: Երկու դեպքում էլ հիմնական միտքն այն է, որ մարդիկ ունեն ինչ-որ ընդհանուր բան: Առաջին դեպքում դա շահն է, երկրորդում՝ տարածքը կամ վայրը: Սակայն չի բացառվում, որ աշխարհագրորեն ցրված շահերի համայնքները տեղայնացված լինեն (տե՛ս Willmott, P., Social Networks, Informal Care and Public Policy. London: Policy Studies Institute. 1986, էջ 83): Այլ կերպ ասած՝ որպես համայնքաստեղծ գործոն դրանցից որևէ մեկը սովորաբար ունենում է որոշակի գերակայություն:

<sup>2</sup> Տե՛ս Шматко Н. А., Качанов Ю. Л. Территориальная идентичность как предмет социологического исследования // «Социологические исследования», 1998, № 4, էջ 94 - 98:

<sup>3</sup> Տե՛ս Վ. Սահակյան, նշվ. աշխ., էջ 29–30:

համար և համայնքի անդամների հետ կապված է ընդհանուր արժեքներով ու շահերով բնութագրվող կանոնավոր փոխազդեցություններով:

Յետևաբար, անդամակցությունը ներառում է.

– *համայնքի սահմաններում լինելու* հնարավորություն,

– *համայնքային գործընթացներին որոշակի ներգրավվածության* հնարավորություն,

– *համայնքի այլ անդամների հետ հաղորդակցության* հնարավորություն:

Այս երեք հնարավորությունների միասնական երկարատև առկայությունն իր հերթին նպաստում է որակապես նոր՝ *ինքն իրեն որպես համայնքի անդամ զգալու և մյուսների կողմից որպես այդպիսին ընդունվելու* հնարավորություն առաջանալուն: Այդ դեպքում ամենօրյա փոխազդեցությունների ընթացքում իրականացվող ինտերնալիզացման հետևանքով տեղի է ունենում տվյալ սոցիալ-տարածքային հանրության հետ անհատի շարունակական նույնականացում, ինչն էլ նոր համայնքային ինքնության ձևավորման պայման է դառնում: Ընդ որում, վերջինս տվյալ դեպքում հանդես է գալիս որպես երկրորդային սոցիալականացման մի յուրատեսակ գործընթաց այն իմաստով, որ անհատը մուտք է գործում նոր սոցիալական իրականություն: Իսկ երկրորդային սոցիալականացման գործընթացները չեն ենթադրում բարձր աստիճանի նույնականացում, և դրանց բովանդակությունը չունի անխուսափելիության որակներ: Այստեղ կարևոր հանգամանք է այն, թե ինչքանով է տվյալ անհատը պատրաստ «իրեն գոհելու» կամ «տրվելու» նոր սոցիալական իրականությանը<sup>4</sup>, որից էլ կախված կլինի համայնքի անդամների՝ որպես «նշանակալի ուրիշների» հետ նրա անընդհատ նույնականացումը:

Այսպիսով, Բերձորի պարագայում *համայնքի սահմաններում լինելու* հնարավորությունն ապահովում է վերաբնակեցման գործընթացը, ինչը նախադրյալ է նոր համայնքային ինքնության սկզբնավորման համար: Նոր համայնքային ինքնության այս փուլը պայմանականորեն կանվանենք **սկզբնավորման կամ նախադրյալների փուլ**, որում կարևորվում են վերաբնակեցման մեխանիզմները (օբյեկտիվ պայման) ու վերահաստատման դրդապատճառները (սուբյեկտիվ պայման): Այդ գործընթացի որոշակի հանգամանքներից կախված՝ անհատը կարող է իրեն նույնականացնել տվյալ սոցիալ-տարածքային հանրության հետ կամ ոչ:

Այստեղ առկա է երկու հանգամանք. մի կողմից՝ ինչ է առաջարկվում (վերաբնակեցման մեխանիզմներ), մյուս կողմից՝ ինչ է պահանջվում (վերահաստատման դրդապատճառներ): Քանի որ օբյեկտիվ պայմանները գնահատվում են սուբյեկտիվորեն, ապա վերաբնակեցման մեխանիզմները՝ որպես օբյեկտիվ պայման, առաջացնում են սուբյեկտիվ դրդապատճառներ, ինչն էլ կարելի է որակել որպես անհատի՝ նախկին բնակավայրը լքելու և նոր համայնքում հաստատվելու հանգամանք:

Վերաբնակիչների որոշ մասը Բերձորում հաստատվել էր ավելի բարեկեցիկ կյանքի ակնկալիքով, իսկ մյուսները՝ «համայնքը վերաբնակեց-

<sup>4</sup> Տե՛ս **Berger P. L., Luckmann T.**, The Social Construction of Reality: A Treatise in the Sociology of Knowledge, Garden City, NY: Anchor Books, 1966, էջ 141-145:

նելու», «հայրենիքի բարգավաճման, հողերի վերաբնակեցման» նպատակով: Ակնհայտ է, որ բարեկեցիկ կյանքի ակնկալիքներն ուղղակիորեն կապված էին վերաբնակեցման մեխանիզմների հետ, որոնք սուբյեկտիվ իրավիճակային գնահատման արդյունքում որոշակի սպասումներ էին առաջացրել: Այսպիսով, անհատը նախկին բնակավայրը լքել և նորում հաստատվել էր այդ սպասումները բավարարելու համար: Մինչդեռ հայրենասիրության պարագայում վերաբնակեցման մեխանիզմներն անուղղակի պայման են հանդիսացել, քանի որ այս դեպքում «սպասելիքներն արդարացված էին»՝ ի հաշիվ հողերի ազատագրման: Նախկին բնակավայրերը լքելու և նոր համայնքում վերահաստատվելու դրդապատճառներից առաջինն ունի առաջնահերթ սոցիալ-տնտեսական, իսկ երկրորդը՝ սոցիալ-հոգեբանական պայմանավորվածություն: Առաջին դեպքում վերաբնակեցման մեխանիզմներն ուղղված էին սպասելիքներն արդարացնելուն, երկրորդ դեպքում՝ աջակցելու նպատակների իրագործմանը:

Այսպիսով, սոցիալ-տնտեսական պայմանավորվածությամբ դրդապատճառներին համապատասխանում էին որոշակի սպասումներ, իսկ սոցիալ-հոգեբանականին՝ որոշակի նպատակներ<sup>5</sup>: Եվ եթե սուբյեկտիվորեն արդարացված կամ բավարար չեն գնահատվում վերաբնակչի սպասելիքները՝ սոցիալ-տնտեսական բարելավումների առումով, ապա նա սկսում է այլընտրանքներ փնտրել և նույնիսկ պատրաստ է հեռանալու համայնքից: Այս իրավիճակն իրապես շիսկային կարող է բնութագրվել նոր համայնքային ինքնության ձևավորման համատեքստում, հատկապես այն պարագայում, երբ համայնքում վերահաստատվելը օգտապաշտական ընտրության արդյունք է, և դեռևս բացակայում է համայնքի հետ հուզական կապը: Այս դեպքում նոր համայնքային ինքնությունը ձևավորելու սկզբնավորման փուլը կարելի է բնութագրել որպես ճգնաժամային: Սոցիալ-հոգեբանական պայմանավորվածությամբ դրդապատճառների տեսանկյունից վերաբնակեցման մեխանիզմները՝ որպես միջոց, ինքնության ձևավորման այս փուլում էական նշանակություն չեն ստանում, որովհետև, անկախ դրանց սուբյեկտիվ գնահատումից, առկա է որոշակի հուզականություն:

Այս երկու դեպքերի միջև տարբերությունն այն է, որ երկրորդում սուբյեկտն ակտիվ կողմ է, որը շահագրգռված է և պատրաստական նոր համայնքում ստեղծելու սեփական կենսական միջավայրը: Իսկ առաջին դեպքում՝ պասիվ կողմ, որի՝ համայնքին ինտեգրումը կախված է վերաբնակեցման մեխանիզմների արդյունավետության սուբյեկտիվ գնահատականից:

Ինքնության ձևավորման հետագա ընթացքը կարող է պայմանավորվել *համայնքային գործընթացներին որոշակի ներգրավվածության և համայնքի այլ անդամների հետ հաղորդակցության* հնարավորություններով

<sup>5</sup> Վերաբնակեցման գործընթացում կարող էին ներառված լինել նաև այնպիսի անձինք, որոնց համայնքում հաստատվելը պայմանավորված էր սոցիալ-տնտեսական գործոններով, և որոնք կարող էին ունենալ ոչ միայն սպասումներ, այլև որոշակի (ոչ հայրենասիրական) նպատակներ: Համայնքի վերաբնակեցման գործընթացում տեղ գտած մի շարք դեպքեր հենց այս մասին են վկայում: Մյուս անձինք, ստանալով որոշակի նյութական աջակցություն, այնուամենայնիվ, չհաստատվեցին այնտեղ: Քանի որ մյուս դեպքերը վերաբերում էին այլ՝ համայնքի ընդլայնման խնդրին, ուստի նոր համայնքային ինքնության ձևավորման տեսանկյունից տվյալ դեպքում հատուկ ուշադրության չեն արժանանում:

կամ, այլ կերպ ասած, համայնքում անհատի ինտեգրման հնարավորությամբ: Ինքնության ձևավորման երկրորդ փուլը կանվանենք **կայացման կամ ինտեգրման փուլ**, որում կարևորվում են անհատների և խմբերի կենսագործունեությունն ու առօրեականությունը՝ որպես վերոնշյալ հնարավորությունների չափորոշիչներ:

Համայնքում ինտեգրման հնարավորությունը նախ և առաջ ունի սուբյեկտիվ կողմ, քանի որ կարևոր է, թե ինչպես է ընթացել առանձին վերաբնակիչների սկզբնավորման կամ նախադրյալների փուլը: Առկա է մի իրավիճակ, որը նախորդ փուլի սուբյեկտիվ գնահատականի ժառանգումն է, ինչն արդեն որոշակի հիմք է ստեղծել, համաձայն որի՝ անհատը պատրաստակամ է ինտեգրվելու, կամ ինտեգրումը տեղի է ունենում ինքնաբերաբար:

Այսպես, ինտեգրումը կարելի է համարել ինքնաբերաբար ընթացող, երբ սպասելիքներն արդարացված չեն կամ գնահատվում են անբավարար: Առավել բարենպաստ այլընտրանքի բացակայության պատճառով բնակիչը շարունակում է ապրել համայնքում, սակայն նախկին համայնքային ինքնությունը դեռևս գերիշխում է: Հրատապ է մնում սպասելիքների արդարացման խնդիրը, որի պատճառով համայնքի հետ նպատակներ չեն կապվում: Անհատը պասիվ կողմ է, և համայնքում նրա ինտեգրումը շարունակում է կախված մնալ օբյեկտիվ պայմաններից: Արդյունքում համայնքի կյանքում առաջանում են թույլ ներգրավված խմբեր, որոնք աչքի չեն ընկնում իրենց առօրյա ակտիվ գործունեությամբ: Ահա այս իրավիճակում անհատը կարող է յուրաքանչյուր բարենպաստ այլընտրանքի դեպքում լքել համայնքը: Քանի որ համայնքում բնակություն հաստատելու դրդապատճառները սոցիալ-տնտեսական պայմանավորվածություն ունեին, հետևաբար նրա՝ համայնքում հաստատվելը օգտապաշտական ընտրության արդյունք է, և սպասելիքները չարդարանալու դեպքում այն հեշտությամբ կարող է փոխվել:

Անհատը պատրաստակամ է ինտեգրման, երբ սուբյեկտիվ գնահատմամբ ավարտված է ինքնության ձևավորման սկզբնավորման փուլը, այսինքն՝ կան այդ փուլում սպասելիքներ չեն եղել, կան դրանք արդարացված են, կան էլ գնահատվում են բավարար: Եթե առաջինի դեպքում «համայնքը վերաբնակեցնելու», «հայրենիքի բարգավաճման, հողերի վերաբնակեցման» նպատակն ինտեգրման համար ի սկզբանե ներքին մղում է առաջացրել, ապա մյուս երկուսի դեպքում համայնքի ընտրության հետ կապված սպասելիքներն արդարացված են: Սա նոր համայնքի հետ նույնականացման եզրեր է առաջ բերում, ինչն էլ իր հերթին հիմք է ինտեգրման պատրաստականության համար:

Համայնքում ինտեգրման այս երկու դեպքում էլ ինքնության ձևավորման գործընթացը կարող է ճգնաժամային որակվել (ընդ որում, առաջինի դեպքում ճգնաժամն ավելի է խորանում), եթե օբյեկտիվ պայմանները դրա համար նպաստավոր չլինեն: Ինչպես արդեն նշվեց, որպես այդպիսին հանդես են գալիս անհատի կենսագործունեության և առօրեականության պայմանները: Դրանք բնութագրող գործոններից մասնավորապես կարելի է առանձնացնել ներհամայնքային սոցիալական կառուցվածքը, փոխօգ-

նության, աշակցության ցանցի բնույթն ու արժեքներն անտիվ համակարգը, որոնք ձևավորում են փոխադարձ վստահությունն ու համայնքի սոցիալ-հոգեբանական մթնոլորտը, ինչպես նաև համայնքի ենթակառուցվածքներն ու կենսականորեն անհրաժեշտ պայմանները: Այսինքն՝ նոր համայնքային ինքնության ձևավորման երկրորդ փուլի ընթացքը կախված է նաև համայնքի սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքներից և սոցիալական կապիտալի բնույթից, որոնք պայմանավորում են համայնքի անդամների միջև շփումների, հաղորդակցությունների հաճախականությունն ու լարվածությունը: Քանի որ երկրորդային սոցիալականացման ժամանակ սուբյեկտիվ իրականությունն իր ինտերնալիզացումներով առավել խոցելի է իրականության սահմանումների մարտահրավերների հանդեպ, այդ պատճառով շփումների, հաղորդակցությունների հաճախականությունն ու լարվածությունը (կամ գոնե դրանցից մեկը) անհրաժեշտ են գիտակցության մեջ ինտերնալիզացվող օբյեկտիվ իրականության պահպանման համար<sup>6</sup>:

Վերաբնակեցման վաղ շրջանում, երբ դեռևս ձևավորված չէր համայնքը, չկային ենթակառուցվածքներ, և կենսականորեն անհրաժեշտ պայմանները ստեղծման փուլում էին, կարևոր դերակատարում ունեցան հայրենասիրական մղումներով հաստատված առաջին վերաբնակիչները: Ընդհանուր նպատակը և առօրյա սոցիալ-կենցաղային խնդիրները լուծելու համատեղ գործունեությունը ապահովեցին սոցիալ-հոգեբանական ուրույն մթնոլորտ, որը կառուցվել էր բարձր աստիճանի փոխադարձ վստահության և փոխօգնության համընդհանուր ցանցի վրա: Այս ամենն ամբողջությամբ նպաստեց համայնքի կայացմանը, որովհետև կենսագործունեության ընթացքում ձևավորված հուզականորեն լիցքավորված շփումները և դրանց բարձր հաճախականությունը բարենպաստ հնարավորություններ ստեղծեցին փոխադարձ շարունակական նույնականացման համար, ինչն էլ իր հերթին, զուգակցվելով տարածքի (Բերձոր) և այդ խմբի (առաջին 13 վերաբնակիչներ<sup>7</sup>) խորհրդամիջների հետ, առաջ բերեց խմբին և տարածքին պատկանելության ինքնագիտակցում և ինքնազգացողություն: Այս դեպքում արդեն կարելի է խոսել բերձորցու մասին, որի՝ «համայնքում» վերահաստատվելը պայմանավորված էր սոցիալ-հոգեբանական դրդապատճառներով, և ով ուներ հստակ նպատակ վերակառուցելու և վերականգնելու այն: Ուստի որևէ այլ պայման չէր կարող խոչընդոտել նրա նոր ինքնությունն ընդունելուն, որը ոչ այլ ինչ էր, քան սեփական ընտրության արդյունք: 13-ի ստեղծած «ավանդույթը» կարևոր երաշխիք դարձավ համայնքում սոցիալական համերաշխության ապահովման և տարբեր ենթահամայնքների բացակայության համար:

<sup>6</sup> Տե՛ս Berger P. L., Luckmann T., նշվ. աշխ., էջ 148-154:

<sup>7</sup> Առաջին վերաբնակիչները տասներեքն էին, որոնք գրեթե միաժամանակ էին հաստատվել կիսավեր քաղաքում, որտեղ բացակայում էին կենսականորեն կարևոր գրեթե բոլոր ենթակառուցվածքները: Դժվարին պայմաններում միասին ապրելու և իրենց առօրյա խնդիրները հոգալու, համախմբվածության և փոխօգնության այս նախադեպը կարծես վարքային մոդել է դարձել բերձորցիների համար: Եվ այդ փորձի շնորհիվ ձևավորված փոխադարձ վստահության մակարդակն ու համերաշխությունն էլ նպաստել են համայնքի կայացմանը: Նոր ինքնության ձևավորման գործընթացի տեսանկյունից սա կարևորագույն հիմքեր և ավանդույթ է դրել համայնքում:

Այս շրջանում նորեկներն առավել վաղ հաստատվածների հետ շատ արագ և օբյեկտիվորեն անհրաժեշտ հարաբերությունների մեջ էին մտնում: Դա պայմանավորված էր համայնքի վերակառուցման գործում նրանց այս կամ այն կերպ ներգրավվածությամբ: Գալով համայնք՝ նրանք սկսում էին վերարտադրել փոխօգնության և փոխվստահության վերոնշյալ մոդելը, որն արդեն իսկ գոյություն ուներ վերահաստատված անդամների միջև: Այդ ժամանակ միայն համատեղ գործողությունները կարող էին ապահովել առաջնային կարիքների բավարարումը, ուստի փոխադարձ վստահության միայն բարձր մակարդակն էր երաշխավորում կենսապահովման խնդիրների լուծումը: Միջանձնային շփումներն ամենօրյա բնույթ էին կրում, և աջակցության, փոխօգնության ցանցն ընդգրկում էր ողջ համայնքը:

Համայնքի հետագա ընդլայնմանը զուգընթաց՝ անդամների միջև հարաբերությունների նախկին հաճախականությունը սկսեց նվազել և ավելի տեղային բնույթ ստանալ համայնքի ենթակառուցվածքների զարգացման ցածր տեմպերի պատճառով: Այս համատեքստում համայնքի ենթակառուցվածքների դերը կարևորվում է բնակիչների սոցիալական ցանցի և առհասարակ համայնքում սոցիալական կապիտալի ձևավորման տեսանկյունից: Աշխատատեղերի սահմանափակությունը (հիմնականում բյուջետային հիմնարկներ), ճանապարհների անսարքությունն ու հասարակական տրանսպորտի ժամանակային մեծ միջակայքերով աշխատանքը, ազատ ժամանակի, հանգստի կազմակերպման վայրերի բացակայությունը ամենօրյա շփումների նվազման պատճառ դարձան: Նման պայմանները հանգեցրին անհատների ներգրավվածության սահմանափակմանը՝ էապես ազդելով համայնքի սոցիալական կապիտալի ձևավորմանը. *«...բնակիչները միշտ միմյանց օգնության են գալիս, չնայած հիմա դա այնքան էլ ակնհայտ չի երևում, քանի որ մարդիկ միմյանց լավ չեն ծանաչում»*: Համայնքում ներգրավված անձանց սոցիալական ցանցը հետզհետե նեղացավ՝ ներառելով աշխատանքային կոլեկտիվները, հարևանական համայնքը և ընկերական շրջապատը, իսկ որոշ դեպքերում՝ միայն վերջին երկուսը՝ համայնքում պայմանավորելով փոխադարձ վստահության և փոխօգնության ներուժը:

Հարցվողների պատասխաններում նկատվում է, որ անհատի սոցիալական ցանցի բնույթն ու վստահության մակարդակն էապես որոշել են նոր համայնքային ինքնության զգացումն ու գիտակցումը: Մասնավորապես, երբ հարցվողը նշում է, որ *«...ես այստեղ չեմ մասնակցում ոչ մի բանի: Էսօր գալիս ասում են սա է ձեր մարզպետը, մի ամիս հետո գալիս ասում են փոխել ենք, հիմա էլ նա է ... ով ինչ կարող է անել... Հենց դրա համար էլ ոչ ուզում են տեղեկանալ ինչ-որ բանի մասին, ոչ էլ մասնակցում են»*, *«փորձում ենք ինքներս լուծել մեր խնդիրները, հետո նոր դիմում ենք հարևաններին և ընկերներին»*, որում ակնհայտորեն արտացոլված է վստահության պակաս, սոցիալական ցանցի բավականին նեղ բնույթ, ապա նա իրեն չի նույնացնում նոր համայնքի հետ՝ նշելով. *«...ո՛չ, ո՛չ մի դեպքում: Ես ծնվել եմ Երևանում, ուրեմն ես Երևանցի եմ, իսկ այստեղ ես ապրում եմ»*: Եվ սա այն պարագայում, երբ համայնքում վերահաստատվելու դրդապատճառն ուներ սոցիալ-հոգեբանական պայմանավորվածություն, հետևաբար անհատը պատրաստակամ է եղել ինտեգրման. *«Ես այդ ժա-*

մանակ Մոսկվայում էի, կինս էլ ԵՊԳ-ում դասախոս էր: Հիմնական դրդապատճառն այն է, որ ցանկանում էիմք ինչ-որ ձևով ներդրում ունենալ այս համայնքի կայացման մեջ»: Սակայն հետագայում համայնքի որոշ ինստիտուտների հանդեպ վստահության պակասը, ինչպես նաև բավականին նեղ սոցիալական ցանցը համայնքից օտարվածության զգացողություն են առաջացրել, որը, իհարկե, ճգնաժամ է առաջացրել ինքնության ձևավորման այս փուլում. «Եվ կարծում եմ՝ ես իմ պարտքը կատարել եմ»:

Մեկ այլ դեպքում, երբ հարցվողը նշում է, թե՝ «Համայնքում չեն լինում դեպքեր, որոնց տեղյակ չլինենք, բայց շատերին չենք մասնակցում: Մասնակցում ենք ընտրություններին, Բերձորի տոնին ենք մասնակցում: ...Բոլորի հետ էլ լավ հարաբերություններ ունենք...: ...Բերձորից հեռու միմյանց տեսնելու ժամանակ այնքան ջերմ ենք իրար ողջագուրվում, որ կարծես մի ընտանիքի անդամներ լինենք», «...Դիմել ենք քաղաքապետարան, և մեզ աջակցել են», որում նկատվում է վստահության ավելի բարձր մակարդակ և սոցիալական ցանցի համեմատաբար լայն բնույթ, ապա նա իրեն համարում է բերձորցի. «Արդեն այո՛, քանի որ տասը տարուց ավել է այստեղ եմ ապրում»: Ընդ որում, այս պարագայում համայնքում վերահաստատվելու դրդապատճառն ուներ սոցիալ-տնտեսական պայմանավորվածություն. «...Այստեղ և՛ աշխատանք կար, և՛ լավ վարձատրություն, դրա համար էլ տեղափոխվեցինք: ...Այժմ էլ գոհ ենք, մեր սպասումները հիմնականում իրականացել են»:

Զնայած վերոնշյալին՝ որոշ առումով կարելի է ասել, որ նույնիսկ այս պայմաններում տարբեր խմբերի կամ շերտերի միջև փոխհարաբերությունները դեռևս շարունակում են մնալ ըստ «ավանդույթի»: Դրա պահպանմանը նպաստում են ծխական խորհրդի գործունեությունը, համայնքային տոնակատարությունները, տեղական արդեն ձևավորված սովորույթները. «...նշանակություն չունի, թե որտեղից ենք, եթե նստում ենք մի սեղանի շուրջ, ունենք մեր կենացները. անպայման խմում ենք քաջաթաղցիների կենացը, զոհվածների հիշատակի համար: Մենք հատուկ տոներ ունենք, օրինակ Լաչինի ազատագրման օրը՝ 18-ը<sup>8</sup>...: Այս օրվա համար մի ավանդույթ է ձևավորվել՝ հարիսա ենք պատրաստում բոլորի համար: Եղ տոնին բոլորն են ուրախանում՝ անկախ տարիքից, մեծ խնջույք ենք կազմակերպում, հրավառություն է լինում, բոլորս հավասար պարում ենք, երգում...»:

Նոր համայնքային ինքնությունը կարելի է ձևավորված համարել, երբ համայնքի բնակիչ կամ անդամ լինելու սուբյեկտիվ ընկալումն այլևս այլընտրանք չունի, և համայնքի հետ կապվում են երկարաժամկետ նպատակներ: Այսինքն՝ երբ նոր համայնքային իրականությունը պրակտիկ օգտավետության գիտակցմամբ սուբյեկտիվ աջակցություն է ստանում, այն նախընտրելի է դառնում՝ սուբյեկտիվ ընկալումներում նախորդ իրականության գերակա դիրքերը զիջելու հետևանքով: Սա կարելի է համարել նոր համայնքային ինքնության ձևավորման վերջին՝ **զարգացման կամ հեռանկարների փուլը**, որն անհատի կենսագործունեության և առօրեականության դինամիկան է և ուղեկցվում է համայնքի հետ կապված հեռան-

<sup>8</sup> Նկատի է առնվում մայիսի 18-ը: 1992 թ. այդ օրը ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի կողմից ազատագրվեց Լաչինը:



կարների առաջացմամբ: Նոր ինքնության ձևավորման տեսանկյունից այն կարող է լինել պրոգրեսիվ կամ ռեգրեսիվ հակվածությամբ: Եթե ինքնության ձևավորման նախորդ փուլերից մեկը բնակչի սուբյեկտիվ գնահատմամբ ոչ արդյունավետ է ընթացել, ապա զարգացումը ռեգրեսիվ հակվածություն ունի, հակառակ պարագայում՝ պրոգրեսիվ: Սակայն երկու դեպքում էլ ինքնության ճգնաժամի վտանգն առկա է, քանի որ նույնիսկ պրոգրեսիվ զարգացման դեպքում համայնքի հետ կապված նպատակների հեռահարությունը պայմանավորված է համայնքի սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքների և ինստիտուտների զարգացմամբ, կառավարման համակարգի արդյունավետությամբ:

Հատկանշական է նաև այն, որ նոր համայնքային ինքնության ընդունումն այնպայման չէ, որ ենթադրի նախկին համայնքային ինքնության կորուստ: Եթե որոշ անձանց դեպքում դա այդպես էր, ապա մյուսների համար երկու ինքնություններն էլ կարող են արտահայտվել համատեղ. *«Իհարկե, ինձ համարում եմ բերձորցի, բայց եթե ինձ հարցնեն, թե ես որտեղից եմ, ապա ես կպատասխանեմ՝ գորիսեցի՝ չնայած որ իմ ապրելու տեղն այստեղ է: Ես ինքս ծնվել եմ Գորիսում, ծնողներս այնտեղից եմ, ու ես այլ կերպ չեմ կարող: Չնայած նրան, որ ես այստեղ եմ ապրում, ես երբեք չեմ ուրանա այն հողը, որտեղ ծնվել եմ»*, *«Աշխատանք կա, այստեղ ենք մնում, խի՞ չպետք է համարենք մեզ բերձորցի: Բայց ես ծնվել և մեծացել եմ Գորիսում: Այդ պատճառով ինձ համարում եմ գորիսեցի, այլ ոչ թե բերձորցի»*, *«Իհարկե, ինձ համարում եմ բերձորցի: Եհիշտ է, ես առաջին հերթին գյուլմրեցի եմ, բայց այսօր արդեն, հանգամանքների բերումով, կիսով չափ բերձորցի եմ, կիսով չափ՝ գյուլմրեցի»* և այլն:

Սա հիմնականում պայմանավորված էր անհատի կենսագրությամբ՝ ծննդավայրի և/կամ նախկին համայնքի նկատմամբ հուզականորեն լիցքավորված կապվածության դրսևորմամբ, կարոտով, պարտքի զգացումով: Այս երկու դեպքերի միջև էական տարբերություն չի նկատվում, քանի որ որևէ հիմնավորմամբ համայնքի հետ հեռահար նպատակներ կապելն արդեն ինքնին խոսում է նոր ինքնության մասին, որը եթե նույնիսկ զուգահեռաբար գոյակցում է նախկինի հետ, ապա, միևնույն է, նոր սոցիալական իրականությունն այդ դեպքում նույնպես սուբյեկտիվ իրականության հետ համաչափության<sup>9</sup> մեջ է:

Այսպիսով, Բերձորում նոր համայնքային ինքնության ձևավորումն ընթացել/ընթանում է երեք հիմնական փուլերով, որոնք մենք պայմանականորեն անվանեցինք՝ սկզբնավորման կամ նախադրյալների փուլ, կայացման կամ ինտեգրման փուլ, զարգացման կամ հեռանկարների փուլ: Յուրաքանչյուր փուլի անվանման առաջին մասը բնութագրում է սուբյեկտիվ նոր իրականությունը կամ, այլ կերպ ասած, ինքնության սկզբնավորումը, կայացումը, զարգացումը (ենթադրում է ինքնության դիմամիկան, սուբյեկտիվ իրականության փոխակերպումը), իսկ երկրորդ մասը՝ այդ իրականության «աջակցման» մեխանիզմները կամ համայնքում անհատի հաստատ-

<sup>9</sup> Պ. Բերգերն ու Թ. Լուկմանը նշում են, որ «հաջող սոցիալականացումը» օբյեկտիվ և սուբյեկտիվ իրականությունների միջև բարձր մակարդակի համաչափության հաստատումն է (տե՛ս Berger P. L., Luckmann T., նշվ. աշխ., էջ 163):

ման նախադրյալների, ինտեգրման, հեռանկարների համար գոյություն ունեցող պայմանները:

Դրանցից յուրաքանչյուրում առանձնանում են տվյալ փուլին բնորոշ սոցիալական գործընթացներով պայմանավորված օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, որոնք այս կամ այն կերպ ազդում են համայնքի հետ նույնականացման զգացման ու գիտակցման ձևավորման վրա: Այդ փուլերը հաջորդականորեն պայմանավորում են միմյանց, դրանց միջև սահմանները հարաբերական են, և անպայման չէ վաղ փուլերն ավարտված լինեն, որպեսզի սկսվեն ուշ փուլերը: Սակայն, այդ վաղ փուլերի անավարտությունը չափազանց մեծ ռիսկայնություն է պարունակում, ինչը կարող է ճգնաժամեր առաջացնել նոր ինքնության ձևավորման գործընթացում: Յուրաքանչյուր փուլը կարելի է ավարտված համարել, եթե դրանում առկա գործընթացներն արդյունավետ են իրականացվել/իրականացվում, որը տվյալ դեպքում գնահատվում է սուբյեկտիվորեն:

Փուլերից յուրաքանչյուրում անհատի մեջ նոր սուբյեկտիվ իրականության վերապրման և/կամ գիտակցման շնորհիվ ձևավորվում են որոշակի իմաստներ՝ առաջացնելով հույզեր: Դրական հույզերի շարունակական առաջացման ժամանակ տեղի է ունենում համայնքի հետ անհատի աստիճանական նույնականացում, քանի որ տվյալ ինքնությունը ցանկալի է դառնում: Բացասական հույզերի պարագայում առաջանում են ինքնության ճգնաժամեր, որոնք խոչընդոտում են համայնքում անհատի ինտեգրմանը:

Առաջին փուլում հույզերը դրական են, երբ սպասելիքներն արդարացված են, երկրորդ փուլում՝ երբ առկա է սոցիալական կապիտալի համեմատաբար բարձր մակարդակ, ինչը բնութագրվում է անհատի սոցիալական ցանցով և համայնքի մյուս անդամների ու ինստիտուտների հանդեպ ունեցած վստահությամբ: Այս տեսակետից հատկանշական է, որ սոցիալական կապիտալի բնույթը մեծապես պայմանավորված է համայնքային ինստիտուտների արդյունավետ գործառնությամբ և ենթակառուցվածքներով: Բարձր մակարդակի սոցիալական կապիտալի պարագայում համայնքային ինքնությունը կարող է անհատի համար դառնալ ցանկալի, քանի որ այդ դեպքում համայնքի այլ անդամների հետ շփումների հաճախականությունը/լարվածությունը համայնքի սոցիալ-մշակութային հատկանիշների վերապրման, հետևաբար նաև համայնքում ինտեգրման լայն հնարավորություն է ստեղծում:

Ինքնության ձևավորման երրորդ փուլում դրական հույզեր են առաջանում, երբ անհատն իրեն «հարմարավետ» է զգում համայնքում, ինչն առավելապես պայմանավորված է իր կենսագործունեության և առօրեականության դինամիկայով: Համայնքի ինստիտուտների և ենթակառուցվածքների գործոնը շարունակում է նշանակալի լինել նաև այս փուլում, քանի որ համայնքի հետ հեռահար նպատակներ կապելը, եթե նախորդ փուլերն ընթացել են առանց ճգնաժամերի, ուղղակիորեն պայմանավորված է այդ գործոնով:

**ГАЙК СААКЯН – Проблема формирования новой общинной идентичности в Бердзоре (Социологический анализ).** – В статье представлены основные

социальные факторы, внешние субъекты и явления, во взаимодействиях с которыми формируется новая общинная идентичность в Бердзоре. Исследование проблем общинной идентичности имеет, с одной стороны, научно-познавательный, с другой – практико-прикладной характер, связанный со стратегическим значением общины. Начиная с 2004 г. сокращение численности населения в Бердзоре свидетельствует о том, что для этой общины актуальна и демографическая проблема, напрямую связанная с динамическими процессами общинной идентичности. Выделяются три этапа их формирования. Неполная реализация любого из них содержит в себе большой риск, способный привести к кризису новой идентичности.

**HAYK SAHAKYAN – *The Problem of the Formation of a New Community Identity in Berdzor (Sociological Analysis)*.** – The article addresses the problems of the formation of a community identity based on the case study in Berdzor. It particularly discusses major social factors, external entities and phenomena in the context of the interaction of which the formation of a new community identity occurs. The study of community identity issues in Berdzor is a matter of scholarly-cognitive significance, which is related to the formation of a community as a result of the intertwining of various community identifications, and therefore, qualitatively new identity. On the other hand, it has practical-applied significance, which is related to the strategic importance of Berdzor community. The continuing decline of the population in Berdzor since 2004 indicates the urgency of demographic problems in the community, which is in direct relation with dynamic processes of community identity formation. The author suggests three subsequent phases of the formation of a new community identity in the article, where only the successful completion of each defines emotional and rational identification of a person with a new community. Otherwise, the incompleteness of any of the phases contains a high degree of risk, which may create a crisis in the process of new identity formation. Each phase is complete, when the processes in it are realized effectively, which in this case is evaluated subjectively by each community member.